

DSUN



culinary
Stepp &



YSU
CULTURE
CENTRE



Համառոտ

նկարագրություն

Երևանի պետական համալսարանը կրթական, գիտական, մշակութային օջախ է: Այս գործընթացներին զուգահեռ մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների արտալսարանային կյանքին:

ՀՀ անկախության վերջին շրջանում ԵՊՀ մշակութային կյանքը նոր վերելք ապրեց. 2006 թ. հունիսի 6-ին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ստեղծվեց Մշակույթի կենտրոնը, որը զանազան միջոցառումներ իրականացնելու նպատակով արհեստավարժ ղեկավարների ջանքերով կազմավորեց մշակութային բազմաբնույթ համույթներ, որոնց աշխատանքներում ներգրավվեցին ստեղծագործող և շնորհալի ուսանողներ, դասախոսներ: Մշակույթի կենտրոնն իրականացնում է ուսանողի արտալսարանային կրթություն՝ իր առջև ունենալով հետևյալ նպատակների իրականացումը, ինչպես նաև խնդիրների լուծումը.

Brief

description

Yerevan State University is an educational, scientific, cultural centre. Along with educational processes great attention is paid to students' extracurricular life. In the recent period of the Independence of the Republic of Armenia the cultural life of YSU has made significant progress: in June, 2006, the Culture Centre was founded by the decision of YSU Academic Council. With the efforts of professional managers various cultural clubs were formed. Moreover, creative and talented students and lecturers were involved in the activities of the Centre. The Culture Centre provides students' extracurricular education, and its main goal is to find solutions to the following problems:



1. ԵՊՀ ուսանողների մշակութային ունակությունների զարգացման խթանում,
2. միջբուհական կապերի ստեղծում,
3. ուսանողության շրջանում տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում,
4. ներհամալսարանական, արտահամալսարանական և միջբուհական մշակութային մրցույթների, փառատոների անցկացում, համերգների և ներկայացումների կազմակերպում,
5. մշակութային դասախոսությունների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպում,
6. ֆիլմերի և ներկայացումների դիտումների և քննարկումների միջոցով ուսանողության հետ գեղարվեստական կողմնորոշումների զարգացում,
7. ԵՊՀ-ում գործող կառույցների կազմակերպած միջոցառումների համախմբում և դրանց որակական չափանիշների ապահովում, ուսանողի աշխարհայացքի և ճաշակի ձևավորում:

1. boosting the development of YSU students' cultural abilities;
2. creating a network with other HEIs;
3. discovering talented and gifted students;
4. organizing cultural contests, festivals, concerts and performances inside and outside the university; holding interuniversity events;
5. organizing seminars, lectures, roundtable discussions on culture;
6. developing students' artistic insight via film and performance seeing and discussing;
7. coordinating the events organized by YSU infrastructures and ensuring their quality standards, enhancing the development of the students' outlook and taste.

Աշխատակազմ / Staff



Կարինե Դավթյան
Մշակույթի
կենտրոնի սնօրեն,
«Համալսարանական»
թատրոնի ստուդիայի
գեղ.ղեկավար
Karine Davtyan
Head of Culture Centre,
Artistic director of
"Universitarian" theatre-
studio



Կարեն Սարգսյան
Երգչախմբի գեղ. ղեկավար
Karen Sargsyan
Artistic director of the choir



Անի Հարոյան
Աղջիկների դարային
համույթի գեղ. ղեկավար
Ani Haroyan
Artistic director of the
female dance ensemble



Նորայր Շահբազյան
Կիթառահարների խմբի
գեղ. ղեկավար
Norayr Shahbazyan
Artistic director of the
guitarist group



Արևիկ Պռազյան
Կենտրոնի մասնագետ
Arevik Prazyan
Specialist of the centre



Սարիա Գրիգորյան
Կենտրոնի մասնագետ
Maria Grigoryan
Specialist of the centre



Ռուբեն Կարասեֆերյան
Երգչախմբի խմբավար
Ruben Karaseferyan
Conductor of the choir

Թատրոն-ստուդիա

«Համալսարանական» առաջին թատրոն-ստուդիան հիմնադրվել է 2005 թ. և գործել «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ի կազմում, որի բացումը տեղի ունեցավ նույն թվականի ապրիլի 28-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի 6-րդ հարկի դահլիճում՝ Վ. Սարոյանի ««Հեյ, ո՞վ կա». պատասխանում է «Ձիմ Դենդին»» ներկայացմամբ: ԵՊՀ մշակույթի կենտրոնի ստեղծման օրից թատրոն-ստուդիան հանդես եկավ կենտրոնի կազմում: Մինչ օրս բեմադրվել է 14 ներկայացում: «Համալսարանական» թատրոն-ստուդիան ընդգրկված է Եվրամիության արվեստների լիգայի (ELIA) կազմում: Թատրոն-ստուդիան պարբերաբար մասնակցել է մրցույթ-փառատոնների, ինչպես հանրապետական «ArtFest», այնպես էլ «Հայֆեստ» թատերական միջազգային փառատոնների: Այստեղ թատերական հակումներ ունեցող ուսանողները սովորում են բեմական խոսք, դերասանի վարպետություն, թատրոնի և կինոյի պատմություն: «Համալսարանական» թատրոն-ստուդիայի գեղարվեստական ղեկավարն ու բեմադրիչն է Կարինե Դավթյանը:

Theatre-studio

The first “Universitarian” theatre-studio was founded in 2005 and functioned within the “YSU Alumni Union” NGO. The studio was opened on April 28 of the same year in the hall located on the 6th floor of YSU Central Building with the play ““Hello, Out There” ... answers “Jim Dandy”” by W. Saroyan. Since the foundation of YSU Culture Centre the theatre- studio has been functioning within the Centre. 14 performances have been staged so far. The “Universitarian” theatre-studio is member of the European League of Institutes of the Arts (ELIA). The theatre-studio has regularly participated in contests and festivals, such as in the “ArtFest” and “HayFest” international theatrical festivals. Here the students with artistic abilities are taught scenic speech, actors’ skills, the history of theatre and cinema. The artistic and stage director of the studio is Karine Davtyan.

Թատերական խումբ

համառոտ տասնական ակնարկ

Համալսարանի թատերական կյանքը հին պատմություն ունի: Դեռևս 1935 թ.՝ Խորհրդային Միության 15-ամյակի առթիվ բեմադրվում են Հ. Պարոնյանի «Շողոքոթքը» և Ա. Շիրվանզադեի «Պատվի համարը»: Հետագայում՝ 1950-ական թթ., դեռ պատանի Երվանդ Ղազանչյանի և Գոժ Մանուկյանի ջանքերով բեմադրվում է Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորները» պիեսը, որին հաջորդում է Հ. Լաքսների «Վաճառված օրորոցային» պիեսը: 1960 թ. Բանասիրության ֆակուլտետի ուսանող Արմեն Սանթրոսյանը հիմնում է «Գիմակ» թատերական խմբակը: Գիմակը բեմադրում է Մաքսիմովի «Կենդանի ննջեցյալներ», Ֆ. Մոլոգուրի «Բնքուշ սրտից պատուհաս» և Չ. Խալափյանի «Օրորոցային» ներկայացումները: 1970-ական թթ. լայն ճանաչում է ունենում հայ բանասիրության ասմունքի խմբակը՝ լեզվաբան Գ. Սևակի ղեկավարությամբ: Մայր բուհն ունեցել է նաև մնջախաղի թատրոն՝ «Սև վարդակակաչներ» անվանմամբ: Այս թատրոնը բեմադրել է Սարսատեի «Գնչուական մեղեդիներ» գործը:

Theatre Company

short historical review

The theatrical life of the university has an old history. Back in 1935 in celebration of the 15th anniversary of the Soviet Union foundation the play “Flatterer” by H. Paronyan and “For the Sake of Honour” by A. Shirvanzade were staged. Later in the 1950s due to the efforts of young Yervand Ghaznchyan and Guzh Manukyan the play “Innocent as Charged” by A. Ostrovsky and then “Sold Lullaby” by H. Laksner were staged. In 1960 Armen Santrosyan, a student of the Faculty of Philology founded a drama club called “The Mask”. The club staged “Alive Deads” by Maksimov, “Scourge of Tender Heart” by F. Sologub, “Lullaby” by Z. Ghaplanyan and other plays. In the 1970s the recitation club of the Armenian Philology Department led by the linguist G. Sevak became highly popular. The Alma Mater had a Pantomime theatre called “Black Tulips”. It staged “Gypsy Airs” by Sarasate.

Ներկայացումներ / Performances

1. Վ. Սարոյան - ««Հե՛յ, ով կա».
պատասխանում է «Չիմ Դենդին»»
W. Saroyan- ““Hello, Out There”... answers
“Jim Dandy”” (2005)



2. Դ. Դեմիրճյան - «Բազ Նազար»
D. Demirchyan- “Nazar the Brave” (2005)



3. Եղ. Չարենց - «Ես իմ անուշ Հայաստանի...»
Yegh. Charents - “I Love My Sweet Armenia” (2007)





4. Աղ. Այվազյան - «Ցուցակը»
Agh. Ayvazyan-“The List” (2008)



5. Եր. Օտյան - «Ընկեր Բ. Փանջունի»
Yer. Otyan –“Comrade B. Panjuni” (2010)



6. Պ. Սևակ - «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն»
P. Sevak- “And a Man Called Mashtots” (2011)



7. Ն. Դումբաձե - «Կարոտ»
N. Dumbadze- “Nostalgia” (2011)

8. Վ. Շերսայիր - «Ռոմեո և Ջուլիետ»
W. Shakespeare - "Romeo and Juliet" (2014)



9. Վ. Պետրոսյան - «Հայկական Էսքիզներ»
V. Petrosyan - "Armerian Sketches" (2018)





9. Տ. Չուխաջյան - «Կարինե» օպերետ
T. Chukhajian - Operetta "Karine" (2019)

Աղջիկների

դարային համույթ

ԵՊՀ աղջիկների պարային համույթը ստեղծվել է 2006 թվականի օգոստոսին, գեղարվեստական ղեկավարը եղել է Իռեն Ուլիխանովան: Հիմնադրման օրվանից համույթը մասնակցել է բազմաթիվ միջոցառումների, համերգների, նկարահանումների ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանի շրջանակներից դուրս: Համույթը մասնակցում է նաև ԵՊՀ «Համալսարանական» թատրոն-ստուդիայի ներկայացումներին, պարային բեմադրություններ կատարում անհատ երգիչների ելույթների ընթացքում: Պարային համույթում բեմադրվում են ժամանակակից, հայկական և տարբեր ազգերի պարեր (հունական, իսպանական, ռուսական և այլն): Համույթը համերգային շրջագայություններ է ունեցել ՀՀ-ում, Արցախում և Ջավախքում: Այժմ ԵՊՀ պարային համույթի գեղարվեստական ղեկավարն է Անի Հարոյանը:

Female

Dance Ensemble

The YSU Female Dance Ensemble was founded in August, 2006; the artistic director was Iren Ulikhanova for many years. Since its foundation the ensemble has participated in numerous events, concerts and shooting both inside and outside the university. The ensemble still actively participates in the performances staged by “Univeristarian” theatre-studio, providing accompaniment of choreographic dances for solo-singers. The ensemble also performs modern dances, Armenian national dances and dances of other nationalities (Greek, Spanish, Russian and so on). The ensemble has gone on concert tours in different regions of Armenia, as well as in Artsakh and Javakhhk.

The artistic director of the ensemble is Ani Haroyan.



Երգչախումբ

ԵՊՀ երգչախումբը նորովի դրսևորվում է 2006 թ. օգոստոսին: Խումբը ներկայանում է հայկական և բազմալեզու երգերով (անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն): Երգչախումբը Մշակույթի կենտրոնի կազմում պարբերաբար ակտիվ մասնակցություն է ունենում ՀՀ տարբեր մարզերում, Արցախում և Ջավախքում կազմակերպվող հյուրախաղերին: Մասնակցել է նաև հանրապետական և միջբուհական մրցույթներին՝ գրանցելով հաղթանակներ: ԵՊՀ երգչախմբի գեղարվեստական ղեկավարն է ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյանը, իսկ խմբավարը՝ բազմաթիվ մրցույթների դափնեկիր Ռուբեն Կարասեֆերյանը:

համառոտ տասնական ակնարկ

Գեռևս 1921 թ. Երևանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացման օրը ելույթ է ունեցել «Ինքնագործ երգչախումբը», հետագայում ռեկտոր Հ. Մանանդյանի անմիջական նախաձեռնությամբ Մայր բուհում ստեղծվում է կանոնավոր երգչախումբ: 1930-ական թթ. կեսերին այն անվանվում է «Ծիծեռնակ»՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ: ՀԽՍՀ ժողովրդական արտիստից բացի՝ քառաձայն երգչախմբում գործունեություն են ծավալել Կ. Չաքարյանը, Կ. Կարապետյանը, Հ. Չեքիջյանը, Հ. Թոփիկյանը: Երգչախումբը մինչև 1970-ական թթ. ավարտը վերանվանվում է «Կոմիտաս»: Մշակութային կյանքի խթանման գործում մեծ դեր խաղաց «Ուսանողական գարունը», որը ստեղծվեց 1963 թ., իսկ 1970-ական թթ. վերջին արդեն անցկացվում էին «Քաղաքական երգի» փառատոնները: Ավելի ուշ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գրաբարի դասախոս Խորեն Պալյանը հիմնում է «Տոհմիկ» երգչախումբը, որը ղեկավարում է մինչև իր կյանքի վերջը:



Choir

The YSU choir got a new lease of life in August 2006. The choir performs songs in Armenian and other languages (English, Spanish, French, Russian, etc.). Being part of the Culture Centre, the choir participates in the tours organized in the RA provinces, Artsakh and Javakhk. It has also participated in the republic and interuniversity contests, making numerous achievements. The artistic director of the choir is Honoured Artist of RA Karen Sargsyan, and the conductor is the laureate of many contests Ruben Karaseferyan.



short historical review

In 1921, the amateur choir performed at the ceremonial opening of Yerevan National University; later, on the initiative of Rector H. Manandyan a regular choir was founded in the university. In the middle of the 1930s it was called “Swallow” and was led by the People’s Artist Tatul Altunyan. Later K. Zakaryan, K. Karapetyan, H. Chekijyan, H. Topikyan worked very actively with the choir. Towards the end of the 1970s the choir was named after Komitas. “Students’ Spring” festival regularly held since 1963, played a significant role in boosting cultural life. The 1970s festivals “Political song” were also initiated. Later, in the 80s the Armenian Philology Faculty lecturer of Grabar Khoren Palyan founded the group of “Armenian Folk Song” and conducted it till the end of his life.

Կամերային

նվագախումբ

Շարունակելով ձևավորված ավանդույթները՝ 2006 թ. վերակազմավորվում է Կամերային նվագախումբը և գործում որոշ ընդհատումներով: Ակտիվություն նկատվում է անկախության տարիներին, երբ արդեն Հայաստանը ապրում էր հարաբերական կայուն ժամանակներ: 2006 թվականից ցայսօր ԵՊՀ կամերային նվագախմբի գեղ. ղեկավարն է ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյանը:

համառոտ տասնական ակնարկ

1950-ական թթ. բարձր կատարողականությամբ փայլում է Էստրադային նվագախումբը՝ Է. Թումանյանի ղեկավարությամբ: Երկարատև ընդմիջումից հետո վերաբացվում է ժողգործիքների անսամբլը՝ Ա. Ներսիսյանի ղեկավարությամբ 1960-ականների վերջին ջութակահարների անսամբլը համալսարանի ինքնագործ խմբերից էր: Սակայն ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Գ. Աճեմյանը 1971 թ. դառնում է գեղարվեստական ղեկավարն ու սկսում հավաքագրումը: Ջութակահարներին խմբին գուգահեռ ստեղծագործական ուղի էր հարթում նաև «Նաիրի» վոկալ-գործիքային անսամբլը:



Chamber *orchestra*

The continuation of the established traditions was the reformation of the chamber orchestra in 2006 which worked with some intervals. In the period of Independence due to the relative stability in Armenia, it became more active. Since 2006 till now the artistic conductor of the YSU chamber orchestra is Honoured Artist of RA Karen Sargsyan.

short historical review

In the 1950s the pop-orchestra conducted by E. Tumanyan was distinguished by its great artistic performance and became highly popular. After a long break the ensemble of folk instruments was re-opened under the leadership of A. Nersisyan. At the end of the 1960s the ensemble of violinists was one of the popular amateur groups of YSU. In 1971 the Arm SSR Honored Artist G. Achemyan became the conductor of the ensemble of violinists who started the process of recruitment. During the same years the vocal-instrumental band “Nairi” was paving its creative path.

«ՆԻԿԵ» *ջոկատ*

«ՆԻԿԵ» ջոկատը, որը նախաձեռնող, իրագործող, կամավոր երիտասարդների խումբ է կազմավորվել է 2007 թ.: Ջոկատում ընդգրկված են ուսանողներ, ովքեր կամավոր սկզբունքով տարբեր միջոցառումների կազմապերպչական աշխատանքով են զբաղված: Ջոկատը նաև քննարկում է խմբի անդամների մտահաղացումներն ու նախաձեռնությունները և իրականացնում դրանցից լավագույնները: Ջոկատի աշխատանքները համակարգում է Արևիկ Պռազյանը:

“NIKE” *squad*

It is a squad of initiative, volunteer youths. NIKE was formed in 2007. It involves volunteer students who are engaged in the organization of various events. The squad discusses the ideas and initiatives of its members and voluntarily fulfills best of them. The coordinator of the squad is Arevik Prazyan.



Գեղանկարիչ Արթինի արվեստանոցում
In artist Arthins' studio (2018)

Կիթառահարների խումբ

Հայ երիտասարդության շրջանում այժմ բավականին մեծ տարածում է ստացել կիթառային երաժշտությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը և ընդառաջ գնալով ԵՊՀ ուսանողների տվյալ գործիքին տիրապետելու և կատարելագործվելու ցանկությանը, ինչպես նաև այն, որ արդեն երկու տարի է ԵՊՀ մշակույթի կենտրոնում հիմք է դրվել բարդ երաժշտության մասսայականացմանը՝ ԵՊՀ ռեկտորի աջակցությամբ Մշակույթի կենտրոնում 2014 թ. բացվեց կիթառահարների խումբ, որն իր շուրջն է հավաքել մի շարք տաղանդավոր ուսանողների: Խմբի գեղարվեստական ղեկավարն է երաժիշտ Նորայր Շահբազյանը:



Guitarists' Group

Taking into account the popularity of the instrument and YSU students' desire to learn to play it or improve their skills, in 2014 with the rector's support a guitarist club was opened at YSU Culture Centre. The two-year propaganda of "bard" music also contributed to the opening of the group. The guitar club consolidated a number of talented students. The artistic director of the group is Norayr Shahbazyan.

Գրական *ստուդիա*

«Գրական ստուդիան», շարունակելով ավանդույթները, Մշակույթի կենտրոնի կազմում սկսեց գործել 2006 թ.: Գրական ստուդիայի գործունեության շրջանակներում կազմակերպվում են վարպետության դասեր, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, դասականների գործերի շուրջ զրույցներ, արվեստի տարբեր թեմաների և ստեղծագործողների աշխատանքների շուրջ քննարկումներ: Վերջին 6 տարվա ընթացքում կազմակերպվել են ներհամալսարանական, միջբուհական և արտահամալսարանական գրական մրցույթներ, որի աշխարհագրությունն ընդգրկում է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Մրցույթների արդյունքում իրականացվել են մասնակիցների լավագույն երկերի հրատարակությունները, որոնց թվում են՝ «Արմատ և լույս» անթոլոգիան (2008 թ.), «Բարի երթ» ժողովածուն (2009 թ.), «Քայլեր և արձագանք» գիրքը (2011 թ.), «Գրական համալսարան. ստեղծագործում են ուսանողները» ժողովածուն (2012 թ.), «Անկախության սերնդի ձայնը» (2016 թ.): Գրական ստուդիայի ղեկավարն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը:

Literary *studio*

Literary studio started working within the structure of the Culture Centre in 2006. The studio organizes master classes, meetings with contemporary writers, discussions on the works of classics and on various themes related to art and creativity. During the last 6 years, interuniversity literary contests were held inside and outside the university, including Artsakh. Best works of the participants were published. In particular: anthologies “The Root and the Light” (2008), “Bon Voyage” (2009), “Steps and Echoes” (2011), “University of Letters: students are creating” (2012), “Voice of Independence Generation” (2016).

The head of the studio is professor Samvel Muradyan, Doctor of Philology.

Համառոտ դասմական ակնարկ

Առաջին խմբակը ստեղծվել է 1923 թ. նշանավոր գրաքննադատ Յոլակ Խանզադյանի նախաձեռնությամբ: Խմբակին անդամակցել են այնպիսի մեծանուններ, ինչպիսիք են Ն. Չարյանը, Գ. Մահարին, Գ. Սևակը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, ունեցել է իր օրգանը՝ «Գրական սերունդ» պատի քերթը: Արդեն 1959-1965 թթ. լույս է տեսնում «Ուսանողի քնար» ժողովածուն: 1960-ական թթ. է. Ջրբաշյանի ղեկավարությամբ ստեղծվել է ստուդիա: 1981 թ.-ից Վ. Մաղալյանի նախաձեռնությամբ վերականգնվել է գրական-գեղարվեստական ժողովածուն՝ «Գրական համալսարան» վերտառությամբ, որը տպագրվում է մինչ այսօր:



Short historical review

The first literary club was gathered in 1923 on the initiative of famous literary critic Tsovak Khanzadyan. Such outstanding figures as N. Zaryan, G. Mahari, G. Sevak, M. Abeghyan, A. Terteryan were members of the club. They had their wall newspaper called “Literature Generation”. From 1959 up to 1965 “Students’ Lyrics” collection was launched. In the 1960s the studio was established by E. Jrbashyan. Since 1981, on the initiative of V. Maghalyan, the literature-artistic collection “University of Letters” was restored and is being published up until now.

Կինոակումբ

Մշակույթի կենտրոնը Ազգային կինոկենտրոնի հետ համատեղ (համակարգող՝ գլխավոր նկարիչ Աշոտ Համբարձումյան) 2010 թ. դեկտեմբերին ստեղծեց կինոակումբ, որը հնարավորություն է ընձեռում համալսարանականներին անվճար դիտելու հայկական և արտասահմանյան լավագույն ֆիլմերը: Այստեղ պարբերաբար կազակերպվում են ֆիլմերի դիտում-քննարկումների ցուցադրվող ֆիլմերի ստեղծագործական խմբերի մասնակցությամբ, ինչը համալսարանականներին հնարավորություն է ընձեռում շփվելու ճանաչված ռեժիսորների և դերասանների հետ:

Կինոակումբը բացառիկ իրավունքով ցուցադրում է նաև «Ոսկե ծիրան» կինո փառատոնում ներկայացված ֆիլմերը, ինչպես նաև ազգային կինոկենտրոնի կողմից նկարահանված նոր ֆիլմեր: Կինոակումբի համակարգողը Մարիա Գրիգորյանն է:



Cinema Club

The Culture Centre in cooperation with the National Cinema Centre (coordinator- chief artist Ashot Hambarzumyan) initiated a cinema club in December, 2010. It gave the universitarians the opportunity to watch Armenian and foreign films free of charge. Film showings followed by discussions are held here with the participation of the cast members of the films which avails universitarians a good chance to communicate with popular filmmakers and actors in person. The cinema club also has the exclusive right to show different films presented at “Golden Apricot” film festival, as well as the new films made by the National Cinema Centre. The coordinator of the cinema club is Maria Grigoryan.



Կինոակումբի բացման արարողություն
Opening ceremony of the Cinema Club (2010)
left to right: H. Galstyan, E. Baghdasaryan, A. Mkrtychyan, G. Gevorgyan,
R. Markosyan, A. Hambardzumyan, A. Sukiasyan



«Շնորհակալություն, Հայրիկ»
"Thank you, Dad" (2015)
left to right: K. Davtyan, M. Poghosyan,
A. Hambardzumyan



«Լյուդվիգ անունով ողնին»
"A Hedgehog by the Name Ludwig" (2018)
left to right: G. Hovakimyan, A. Chobanyan, M. Mkrtychyan,
A. Ghazaryan, A. Hambardzumyan, K. Davtyan

Ժողովրդական գործիքների նվագախումբ

Ժողովրդական գործիքների նվագախումբը ձևավորվել է 2014 թ. և այդ օրվանից ակտիվորեն մասնակցում է ԵՊՀ-ի և պետական այլ կառույցների կողմից կանգակերպվող միջոցառումներին, փառատոններին, համերգներին և նկարահանումներին: Նվագախումբն ունի 15 անդամ, պարապմունքներն իրականացվում են երկուշաբթի և չորեքշաբթի օրերին՝ երկու ժամ տևողությամբ:
Գեղարվեստական ղեկավարը Արմեն Այվազյանն է:



Folk Orhcestra

The folk orchestra founded in 2014 is one of the groups in YSU Culture Centre. Since its foundation the orchestra has taken part in various events, festivals, concerts, shooting organized by YSU and other institutions. The orchestra consists of 15 members. Two-hour classes are held every Monday and Wednesday. The artistic director of the orchestra is Armen Ayvazyan.

Ազգագրական պարի համույթ

Ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ, պատմաբան, Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը 1987 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետում հիմնեց ազգային երգ ու պարի համույթ, որն ի հիշատակ նախնիների հայրենիքի անվանեց «Կարս»:

Այսօր էլ նրա ընկերների՝ Ռաֆիկ Հակոբյանի, Արա Ավագյանի, Լևոն Սկրտչյանի ջանքերով վերակազմավորվել է խումբը՝ ի հիշատակ Թաթուլ Կրպեյանի:
Համույթի գեղարվեստական ղեկավարն է Ռաֆիկ Հակոբյանը:



Ensemble of Ethnographic Dance

In 1987, the devotee of the national and liberation struggle, historian, the National Hero of Armenia Tatul Krpeyan founded the ensemble of national song and dance at YSU Faculty of History and to commemorate his ancestors' homeland he named it “Kars”. Today with the efforts of his friends Rafik Hakobyan, Ara Avagyan, Levon Mkrtychyan a new lease of life has been given to the ensemble to honour the memory of Tatul Krpeyan.

The artistic director of the ensemble is Rafik Hakobyan.

ԱՇԽԱՆՏՅԱԸ ԿՈՒՂԱԿՈՒՄԱԾ ԽԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ Է:
CULTURE IS CODED WISDOM.
(Wangari Maathai)

100

ISBN 978-5-8084-2385-5



ԿՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am

